

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 12 ձր.
Վեցամսեայ 6 »

Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 \$
Վեցամսեայ 1.50 »

ՎԱՆՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
Իրանուցան սոյր առաջին
հրեային համար 40 սանթիմ
հ. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ հ. երեքին
աւելի սեղաններու համար
20 Ս. զեղը կըլլայ :

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐՄ

ՆՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՈՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկն
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Իրանիւնիս կն սրուի

Արտասահմանի ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռք
× 15 ՍԱՆԹԻՄ ×

ՎՏԱՆԳԸ ԱՆՑՆՈՒՄ Է

Դեռ երէկ էր որ ամէն կողմից ագռաւները կոկոսում էին մեր յեղափոխութեան վրա. հայ ժողովրդի մէջ ինչ որ ալ տատա տարր կար վեր էր բարձրացրել իր գլուխը և անէ՛ք, ցեխ ու հայհոյանք էր թափում հայ յեղափոխականի գլխին. Մեր յեղափոխութեան անյաջող վայրկեաններում հայ աղտոտ տարրի գլուխը վեր բարձրացնելը, անէ՛ք կարգալը անբնական չէր. անբնականը, վտանգաւորը այն երեւոյթն էր որ յեղափոխական համարված տարրի մի մասն էլ ձեռք ձեռքի տւած սարկացած ու անբարոյականացած հայ տարրի հետ ցեխոտում էր յեղափոխութիւնը, մրտում յեղափոխական նոյն իսկ ամենամաքուր գործը և գործիչներին :

Եւ այդ հալածանքի ու մրտումի դառն վայրկեաններում հայ յեղափոխականը մեծէ՛ց երանէր կատարելու գալիք վտանգի առաջը առնելու, յեղափոխութիւնը փրկելու գործի մէջ :

Հայ յեղափոխականը պարտաւոր էր կռիւ մղել. ծանր, սիրտ մաշող, կուրծք ծակող, հոգի տանջող կռիւ մղել իր ծոցից, դուրս փրժած հայ հակայեղափոխական տարրի հետ, որի յեղափոխութեան հասցրած հարուածները աւելի ջնջիչ ու ոչնչացնող էին, քան Սուլթան Համիտի բռնակալական ամբողջ զօրութիւնը :

Հայ յեղափոխականը իր այդ պարտքն էլ կատարեց յանձին գաշակեցականներին :

Հակայեղափոխական մի ահագին լէգէոնի դէմ մի քանի անվախ գաշակեցականներ հրապարակով կուրծք աւին, կասեցրին մեր հակայեղափոխական հոսանքը և դրանով ապացուցեցին թէ՛ նրանք այն տեսակի յեղափոխականներն են, որոնք ամենայն արագութեամբ նկատում են մեր ազատագրութեան գործին սպառնացող վտանգը և իսկոյն միջոց-

ներ են ձեռք առնում յայժմէլ նրան :

Այսօր հակայեղափոխական տարրը ընկճված է. սխալ ուղղութիւն ընդունող յեղափոխականներն էլ իրենց սխալը ըմբռնել են և իրենց օրգաններում յեղափոխութիւնն են դրվատում և եղբայրութիւն՝ սերտ, անկեղծ եղբայրութիւն են քարոզում. Շնորհաւորում ենք գաշակեցութեան այդ բարոյական մեծ յաղթութիւնը, և ցանկանում ենք որ նա օգտվի ներկայ բարեհաջող հանգամանքներին մեր յեղափոխական ուժերը իրար մօտեցնելու և միահամուռ ուժով, նոր ոգի, նոր ուժ առած՝ նուիրվի մեր իսկական թշնամու հետ կուռելու գործին :

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 20 Յուլիս

Սիրելի ընկեր,

Ուղղակի ու անուղղակի հայ զիւղացիներու վրայ կառուցաւորութեան կողմէ սարգուած խնամութիւններու պատճառը, իբր թէ հայդուկային խումբերու պահպանում ու անոնց անմիջական պէտքերու հոգալն է եղած, կարծես թէ՛ եթէ այդ խումբերն չը գտնուէին, կարգ ու կանոն վերահաստատուած պիտի ըլլար ու մենք հանգիստ պիտի ապրէինք, այն ինչ եղած են այնպիսի օրեր ու ամիսներ, որ հայդուկային խումբերու հետք իսկ չէ գտնուած Մշոյ գաւառներէն և ոչ մէկին մէջ : Ինչ ըսենք այդ ժամանակուայ չը լսուած ու չը տեսնուած այն անխիղճ գաղանթութեանց որ անգթօրէն կը գործուէր թէ կառավարութեան և թէ քրիտ համրաիէ հեծելազօրաց ձեռքով. մի՞թէ այդ ժամանակ ալ յեղափոխականներ տեղի տուած էին, որ կառավարութիւնը իւր խստութիւն կրկնապատկէր հայոցս վրայ, կը ցաւինք ու միանգամայն կը զար-

մանանք որ այսօր այս տեսակ հաղարուոր կենդանի օրինակներ մեր աչքի առջեւ կեցած, փոխանակ սթափուելու ու յեղափոխութեան ուժ տալու, ընդհակառակն, դեռ կը գտնուին այնպիսի խեղճ ու կրակ տրամաբանող գլուխներ մեր մէջ, որ այդ խումբերու երեւում վտանգաւոր կը համարին. դիտարկով որ խումբի երեւում ամէն տեղամ նպատակուոր եղած է, ու կըլլայ ընդ միշտ :

Կառավարութիւնը երբ սկսած էր իւր խստութիւնները կրկնապատկել հայ զիւղացիներէն յեղափոխականներ պահանջելով, միւս կողմէն կօմիտէն իր ազդեցութիւնը կառավարութեան ցոյց տալու մասին կը խորհէր. այդ ժամանակ 70 անձերէ բաղկացեալ երկու հայդուկային խումբերն իրենց խմբագրութեան մէկտեղութեամբ Մուրատ աղային տրուան, ի զլէթ էֆէնտի տան վրայ բռնելու հրաման կուտար. քանի որ այդ անձը Մշոյ տաճկութեան մէկ մասի ցեղապետ ու կառավարութեան մէջ ալ «ամրաբի» ու «նիւֆուսի» «խալաներու» «Միւտիւտութիւնները և իւր հօրեղբոր սղայ, Պէտրիտան էֆէնտիին յանձնուած էր. մէկ խոսքով Մշոյ տաճկութեան էն ազգեցիկներէն մէկն էր :

Իզէթի աունը քաղաքի մէկ անկիւնն էր այդի մէջ գրտնուելուն համար, կօմիտէն շատ պարզ է որ այդ յարմար առիթն ձեռքէ չի պիտի փախցնէր, ու այսպէս նախապատրաստութեամբ գիշեր մը հայդուկները իզէթի տուն պաշարելով, դուռը կը բանան, մաս մը վար մնալով, միւս մասն ալ վեր կելլեն, ու իզէթի պառկած սենեակի դուռն կըսկզբին կուրելու իզէթ յանկարծակիի գալով կայլայլի, ու յետոյ ինքնապաշտպանութեան կը գիտմէ. այդ ժամանակը խմբագրութեան մէկը մեղմութեամբ մը կը զգուշացնէ զայն ցոյց տալով ներս և թէ դուրս գտնուող հայդուկներն ու կը պահանջէ որ անձնատուր ըլլայ եթէ ոչ կըսպանուայ ամբողջ ընտանիք սուրէ

անցնել. Իզէթ ուժի առջեւ խոնարհելով կը յանձնուի : Խմբագրութեան յեղափոխութեան իզէթէն 1500 ոսկուոյ գումար մը կը պահանջէ. իյդ միջոցին իզէթի վրայ այդքան գումար չի գրտնելով 300 ոսկին խմբագրութեան յանձնելով կը խնդրէ մնացածին ալ միջոց մը տալ, պահանջած ժամանակ վճարելու :

Խմբագրութեան էֆ. — Ինչու 300 ոսկին երդ յանձնեցիր, Իզէթ. եթէ չը տայի զիս և ընտանիքս պիտի սպաննէիք. Խմբագրութեան խմբագրութեան ինչու կը մեղադրէք, թէ յեղափոխականներ կը պահեն իրենց մէջ, ու այդ պատճառաւ ալ հարիւրաւորներ անմեղ տեղ բանտարկած էք, իզէթ. — այդ շատ անմեղներ այդ անունով բանտարկուած են : Խմբագրութեան — չէ՞ որ անոնք ալ հակառակելու ըլլան, անոնց եւս կը սպաննէմք : — Իզէթ — պէտք է ուժի առջեւ խոնարհիլ. ինչպէս որ ես հարկադրուած եմ :

Մենք ձեզ վրաս մը հասցնելու կամ դրամ պահանջելու չէ որ եկած ենք, այլ քանի որ դուք կառավարութեան պաշտօնեաներէն մէկն էք, եկած ենք ձեզ հասկցնելու թէ յամենայն դէպս հայ զիւղացին մեղաւոր չէ մեղ իրենց մէջն պահելով, քանի որ եթէ հակառակի պիտի սպաննուի, հետեւաբար կը հարկադրուի լըռուել, ինչպէս որ դուք ալ հարկադրուեցաք խոնարհիլ մեր պահանջին առջեւ :

Էֆ. ձեզմէ կը պահանջենք որ վաղը առտուտ երեք բեռ հաց մնչ Մեծմակ լեռան քիթը զբրկէք, ու փաշային ալ երթաք այս անցուդարձի մասին խօսիք. թող խեղճ զիւղացիներն ձգէ, մեր ուրտեղ գտնուելին ալ իրեն յայտնեցէք, եթէ կառավարութեան ըսելիք մը կայ, մենք պատրաստ ենք, կը պատասխանեմք, թող հրամմէ :

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԿԱՍԻՑ

II

80ական թվականներում կովկասահայերս ոգեւորում էինք դրպրոցներով և բարեգործական հիմնարկութիւններով, ուսումնաժարաւ կովկասահայը ամէն մի անկէնում դպրոցներ էր բացանում, բազմաթիւ հայ երիտասարդներ տեղաւորվում էին դպրոցներում և մտաւոր սնունդ էին մատակարարում հայ մանուկներին. մասամբ էլ ժողովրդին. Այդ դրպրոցները և նրանցում ծառայող ուսուցիչները մեր գրականութեան, մամուլին մեծ նիւթ էին մատակարարում. հայ ուսուցիչը միջնորդ էր հանդիսանում ժողովրդի և մեր մտաւոր բարձր պատկարգի մէջ, հայ հարուստը սովորում էր իր ունեցածից բաժին հանել և աղքատ ժողովրդի մանուկներին դաստիարակութեան գործին, հայ ուսուցիչները տալիս էին և թատրոնական ներկայացումներ. անյայտ որ մի քանի գիւղերում թատրոնն էլ ըսկսել էր պահանջ գառնալ. մտաւոր շարժումը և ոգևորութիւնը բէջէին թագաւորում. գոնէ շարունակաբար գոյութիւն ունէին:

Այսօր այդ բոլորը գոյութիւն չունին. բուն ժողովուրդը զուրկ է ամէն բանից. ուսուցիչները՝ գաւառական միակ ինտէլիգենտ և ժողովրդի համար սրտուցաւ ուժերը, մի կտոր հաց ճարելու համար թողել են գաւառները և տարածվել արդիւնաբերական քաղաքներում:

90ական թվականներից կովկասահայերս ոգեւորող խնդիրը եղաւ մեր տաճկահայ եղբայրների յեղափոխական շարժումները, ամբողջ երիտասարդութիւնը ազատութեան գաղափարով ցնցվեց՝ մտաւ ժողովրդի ամեն խաւերի մէջ, տարածեց գաղափարը, քարոզեց ժողովրդին, դրդեց օգնելու իր կուռղ եղբորը:

Ոգեւորութիւնը երիտասարդութեան և ժողովրդի միջին կարգութեան խաւերի մէջ իր գաղափարակէտին հասաւ. ընչաքաղց հարուստն անգամ սկսեց տեղիցը շարժվել, սակայն այդ էլ երկար չը տևեց: Յեղափոխութեան անյաջողութիւնները և ուսական փոքրիկ սեղմումները այդ ոգեւորութիւնը ամենամեծ արագութեամբ մարեցին, և զարմանալին այն է որ ամենից առաջ թուլացողը, ընկճվողը եղաւ երբեմնի ոգեւորող քարոզիչը, զԱԶՏԻ յեղափոխականը: Մի քանի բանտարկութիւններ, մի քանի արտոններ բաւական եղան մեր կարմիր յեղափոխականներին համեստ քաղաքացիների վերածելու համար: Եւ այսօր ուսուցիչները, երբեմնի յեղափոխականները ամէն ինչ բարձի թողարած, ամէն բան մոռացած իրենց համար հաց ճարելու և դիրք ստեղծելու ջանքերով են շրջված...

Մենք կարծում էինք թէ դրպրոցների փակումը, ուսական հալածանքները դէպի տաճկահայ շարժումներին մասնակցողները աւելի պիտի բորբոքէին մեր հայրենասիրական

զգացմունքները, աւելի պէտք է մղէին մեր ցաւերին դարմանտանելու արմատական միջոցը: Իժադդաբար մեր այդ կարծիքը բոլորովին սխալ դուրս եկաւ: Մենք, փոխանակ բորբոքվելու, փոխանակ մեր ազատական ձգտումների մէջ ամրապնդվելու, վայրկեանապէս թուլացանք:

Բանից դուրս եկաւ որ մեր ազատականները ազատութիւնը սիրում են այնքան, որքան բռնակալները թոյլ կտան: Բանից դուրս եկաւ որ կովկասցիներս մեր տաճկահայ եղբոր ազատութեան գործին կարող ենք մասնակցել միայն այն դէպքում, երբ ուս կառավարութիւնը թոյլ կը տայ մեզ այդ անելու: Իսկ այդ կարող է միայն պատահել այն ժամանակ, երբ ուսը «թշնամական» յարաբերութիւնների մէջ է ծանկատանի հետ: Գեղեցիկ աղատասէրներ և հայրենասէրներ ենք, չէ՞: Ձենք նմանում ոչ լեհերին, ոչ քօթերներին, և ոչ մեր տաճկահայ եղբայրներին:

Մենք միայն մեղնով ենք զբաղված. ուսում ենք, խումբ և հարտանում: Մեզ համար ի՞նչ փոյթ թէ Պարսկաստանում և այլ հայկական գաղութներում դրպրոցների մեծ պէտք է զգացվում, ազատութիւն կայ հայ կրթութիւն ստանալու, բայց դրամ չը կայ: Մենք մեղաւոր չենք որ այդ հայերը դրամ չունին: Մեզ համար ի՞նչ փոյթ թէ Հայաստանում շատ որբեր կան. մենք միթէ պարտաւոր ենք նրանց պահել: Մեզ համար ի՞նչ փոյթ թէ տաճկահայերը զէնք չունին, ուզում

են ազատվել. թող իրենց փոյզով զէնք գնեն:

Ահա ինչպէս ենք դատում ներկայումս մենք, կովկասցիներս. լաւ է, չէ՞:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Քաղաքական գործերը խառնու ու փնթոր վիճակի մը մէջ կը գտնուին: Թուրքիա և Պրանսա լարուած են իրարու դէմ, Ֆրանսական պետականը քիթ ու մուկ թըճմարած իրարից դարձաւ: Սուլթանին պալատի մէջ վիճակը ինկեր է: Կարմիրը պատերազմէ կը վախնայ և հաւանական է որ Պրանսայի բոլոր պահանջները կատարէ. մեզի ի՞նչ:

Պրանսայի այս խրոխտ դիրք բռնած միջոցին հիւսիսի զօրեղ միւսպետը բարեհաճած է Պրանսա գալ: Պրանսական նախարարութիւնը, մամուլը ու ժողովրդին մէկ մասը իրար անցեր են, չեն գիտեր ինչպէս ընեն որ հաճելի ըլլան ճերմակ միւսպետին:

Իրմանիա զբաղած է երկնքի կայսեր պատերազմին ընդունելութեան խնդիրով: Երկնային կայսեր աղնազարմ ազգականը, որ պիտի դար Գերմանիոյ կայսրէն անոր գետպանի սպանմանը պատճառով ներդրութիւն խնդրել, կէս ճամբան կեցցեր է և սեղէն չի շարժիր, առարկելով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐԽՂՃԱՆ, ՈՉ ԿՐ ՍՈՒՆԵՆ

(Շար. նախորդ քիւեկ)

XVI

Մօտ չորս ամիս է որ կրիւք կը շարունակուի. Երկու կողող բանակներու միջեւ կարեւոր ընդհարումներ տեղի չէին ունեցեր դեռ. դանտաղաշարժ Ապտիւլ Բէրիւ փաշան դեռ յարմար չէր սեպեր վճռական հարուածը փորձելու: Այստեղ Չէրնաէվը չէր փափաքէր կանոնաւոր պատերազմի մը մէջ հաւանական ջարդի մը վտանգին ենթարկելու: Բայց ասոնց փոխարէն թուրք պաշտպանները ամէն զազանութիւն կընէին, կայրէին, կը մորթէին ու կը պերէին: Սերպիոյ արեւելեան անկիւնները արդէն ամայացած էին: Խուլ զգոհութիւն մը, անզուսպ մոլեղանութիւն մը կը սկսէր, սերպերէ ուսերէ, պուլկարներէ ու գարատաղցիներէ բաղկացած Սերպիական բանակի ձոցէն: Թիւրքմացութիւնը

հրամաններու կատարել գործողութեան արգելք եղաւ. ազգայնական եսականութիւնը բոլորովին անժամանակ արթնցաւ և բոլոր զինուորական գործողութիւններուն խառնաչիթ ու անհետեւողական ուղղութիւն մը տուաւ:

Սեպտ. 8ին Ալէքսանդրի մօտ. մեծ ընդհարում մը տեղի ունեցաւ. որուն մէջ Սերպերը յաջողեցան թուրք զինուորներու յարձակումը վանել:

Բայց դեռ Յունիսի ճակատագրական օրը չէր եկած: Սեպտ. 16ին, ուս եւ պուլկար զօրաբաժնի Չրգ. վաշտը 850 հոգի պուլկարէ բաղկացած, համազգեստով, կրէտիթին լեռան դիմացը կը կենար:

Կրէտիթինը բարձր դադաթներով լեռնակոյտ մըն էր՝ որոնք խաչածեւ ուղղութեամբ Սերպիոյ արեւելեան սահմաններու երկարութեամբ կը ձգուէին: Անոնցմէ մեծ մասը ցած անտառներով ու մացառներով ծածկուած են:

Բարձր գագաթի մը վրայ, թուրք զինուորները դիրք. մը բռնած էին չորս թնդանոցով ամրացուցած: Գագաթին արեւմտեան զառի վար լանջքին վրայ երեք շարք խրամներ (մարդկոց) շեղակի կերկնային և հրէտինաներու անցքը կը խափանէին: Խրամներու երկարութեամբ փայտէ

ու ծառի խոխունքէ շինուած հիւղակներ կը ցրուէին, խրամը պաշտպանողներուն օգտին ծառայելու:

Էն վերի խրամին ու հրէտանի միջեւ անցքը աւրուած էր. այսինքն հոն բուսնող ծառերէն մէկը կիսէն մէկը արմատէն կտրելով, անոնց ճիւղերով ու խոխունքով այդ միջոցը փակած էին, վախնալով որ չրլայ թէ թշնամին խրամներուն տիրելովը, զիւրութեան զգագաթը վերելած է:

Չորս հինգ թուրք թապուրներ ամենալաւ, արագաձիգ հրացաններով զինուած խրամներն ու հրէտանիները կը պաշտպանէին:

Այդ զինուած գագաթէն քիչ մը հեռուն, ուրիշ թուրք պատերազմական ուժեր կային, պատրաստ կը կենային ի հարկին օգնութեան գալու:

Չորի միւս կողմը. էն բարձր կատարի վրայ, որ միացած միւս բարձրութիւններուն կիսէր, թրքական ուրիշ հրէտանի մը կար, մէկ քրուքի թնթանով: Չայն սպէլա պատրէտ» (ճերմակ հրէտանի) կանուանէին:

Անկէ աւելի հեռուն, Մօրավալի դեղին հովիտի արեւմուտ, հրկեւուած Սերպ գիւղերէն ծովի սեւ սիւներ կը տեսնուէին, որոնք հրոյ ճա-

րակ եղած ու թալանի տրուած էին պաշտպանութեան:

Բայց եւ այնպէս ուս եւ պուլկար զօրաբաժնի Չրգ. վաշտը պէտք էր այսօր թշնամույն այս բոլոր ուժերուն դէմ կոռէք: Պատերազմական ծրարքին համեմատ իրեն հրամայած էր թուրք բոլոր մտքական զիճիւրուն վրայ բնականոր յարձակում մը ընելով կրէտիթինի գիրքը գրանել:

Վաշտը զինուած էր պէլճիական հրացաններով, որոնք բերնէն կը լեցունէին. գաբսուով կը կրակուէին: Բոս պուլկար վաշտէն քիչ մը անդին կը կենար արժիւններու բանակ մը. 300 կտրիճ Գարատաղցիներու խումբ մը իբրիւ օժանդակ ուժ:

Նսեւը, մացառներու ու ծառերու սաղարթներու ներքեւ խոռոած Յ վաշտ պուլկար, հրէտանի մը չորս թնթանովէ բաղկացած և Յ-է վաշտ Սերպիացի, որոնք երկրորդ մտքական գիճը ու պահեստի ուժը կը ներկայացնէին:

Չրգ. վաշտը եւ ուս պուլկար զօրաբաժնի մը միացած միւս երեք վաշտերը, Մօրավալի բանակի հետ միացած, կարող ուս զնդապետ Մէսվէտովսքիի ղրխու որ հրամանատարութեան տակն էր, իսկ ինքը գորավար Չրգ. վաշտի հրամանին տակը

որ վերհէլ շատ ստորնացուցիչ կէտեր խոթած է ներուզութեան ծէսը կատարելուն մէջ :

Կիսաւեր Աւստրիոյ ծերունի կայսրն ալ սիրալիր տեսակցութեան մը կը պատրաստուի փոքրիկ Ռուսիոյ թագաւորին հետ, Ռուսիոյ Պալքանիոյ մէջ ունեցած քաղաքական միտումներու առջեւ պատնէշ մը դնելու համար :

Թրանսվալ, անխոնջ, աննկուն համակրելի թրանսվալ կը շարունակէ իր անհաւասար կոխը գաղան Անգլիոյ հետ : Պօէրնիքը նորէն քաջութեան նշաններ ցոյց կուտան, Անգլիա ալ իր վճռին վրայ անդրադարձի կը կենայ : Մինչեւ ե՞րբ պիտի տեսնուին անհաւասար կոխը, մինչեւ ե՞րբ Պօէրնիքը պիտի կրնան գիմանալ նորէն որոշել կարելի չէ :

Թուրքիոյ ճնշուած քրիստոնեաները դեռ կը տապալկտուին արեան մէջ : Վիճակին աւելի դառնացեր է :

Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ աւերումները, բանտարկութիւնները, սպանութիւնները սաստկացած են : Սուլթանը՝ որչափ հլու և վախկոտ եւրոպացիներու առջեւ, այնչափ դառն ու կատաղի կը ներկայանայ իր հպատակ քրիստոնեաներու դիմաց : Մինչեւ ե՞րբ, ատ ալ յայտնի չէ :

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ
ԵՒ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

«Տի Էնֆորմատիօն» թերթը հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Մակեդոնական կոմիթէի յոր ընտրութեան մասին :

— Շատ մը սուտ լուրերու համեմատ Սարաֆօֆը ընտրուած չէ անոր համար, որ շատ մը գրումական զեղծումներ գործած է եւ նախ քան բանտարկուիլը 407,000 ֆրանք յափշտակած է :

Սակայն Սարաֆօֆ սպասուելէն յետոյ խկոյն կը ներկայանայ ժողովին ու իր հակառակորդներէն կը պահանջէ որ, հաստատեն իրեն վերագրած զեղծումները, Հակառակորդները սատիկ կը շփոթուին, որովհետեւ հաշիւները խառն քննելէ յետոյ ամէն ինչ կանոնաւոր վիճակի մէջ կը գրտնան :

Այդ փաստին հիման վրա համեմտողը որոշումով մը այդ զբաղարարութիւնները կը հերքէ և իր շնորհակալութիւնը կը յայտնէ Սարաֆօֆին վերջինիս անհաւասարութեան եւ ամենաբարձր հայրենասիրութեան համար : Այնուհետեւ Սարաֆօֆ զինքը թիկնածու չի առաջարկեր և իր 20 ընկերներու հետ միասին նիստին դաշխիճէն դուրս կելլայ :

Ու այն չորս հարիւր հեռագրիները՝ սրոնց տակ ստորագրած են 20000 ընկերներ, կապակցուցանեն թէ Սարաֆօֆ որչափ վատահումութիւն կը վայելէ Մակեդոնական կազմակերպութեան մէջ :

Գերմանական թերթ մը յաջողած է ապագայ Մակեդոնիոյ վարչութեան մասին 1898 թւին կազմուած ծրագիր մը ձեռք բերել : Ծրագիրը կազմուած է Սօֆիայի մէջ զոր ստորագրած են ութ անտուտ պետեր և ութ Մաքեդոնացի պուլկար պետեր :

Փոյլուն յաջողական մը վաստակելու սաստիկ փափաքէն կը տոչորուէին, ատոր համար երբ կրնային արուսթիւնը գրաւելու հրամանը իրենց հարգուեցաւ, ամբողջ զօրախումբին մէջ մեծ ողբերգութիւն մը տիրեց : Պուլկարները զօրավար Չէրնաէվին խրատուեցին խօսքերը արդարացի կու լինի փափաքով լեցուած էին : Շիլինկովցի մօտ իրենց ըսած էր թէ ինք մեծ յոյս կը տածէր պուլկարներու վրայ և չի կասկածիր ալ որ քրիստոնէութեան թշնամիին դէմ քաջութեամբ պիտի կռուին :

Ուրիշ կարեւոր հանգամանք մըն ալ կար : Մերայ սպաներու և ընտելիչներուն յարաբերութիւնն ալ պուլկարներուն հետ այնքան արտօմայի չէին : Առաջ ծածուկ, իսկ յետոյ յայտնի ատելութիւն մը նկատուեցաւ : Պատեղազմի կործանարար գործողութիւնը որ վաղուց Սերպիական հողի վրայ փոխադրուած էին, սերպ բանակի իրարու ետեւէ ունեցած անյաջողութիւնները, որով շատ կէտերու մէջ բռնադատուած էին եւ քաղաքուր և Մօրովայի, Թիմօքի ծաղկալից ու բարդաւած հովիտները թալանի ու կրակին յանձնուելու, բոլոր այս ազգաներու երկարութեան առաջ եկած գրգռումը սերպերուն փնտուել տուաւ ընտելանարար աս յանդուպն ձեռնար-

Մինչեւ օրս չը հրատարակուած այդ ծրագիրը կը կազմէր պուլկար Մակեդոնացի պետերու քաղաքական ձգտումներուն հիմքը : Այդ ծրագրին համեմատ եւրոպական թուրքիոյ արեւմտեան նահանգները երկու մեծ ինքնավար նահանգներու պիտի բաժնուի Ալպանիա և Մաքեդոնիա : առաջինին մայրաքաղաքը պիտի ըլլար Էլզաբան երկրորդինը Սելանիքը : Երկու նահանգներուն կառավարչները պիտի նշակուին Սուլթանի կողմէն եւրոպական պետութիւններու համաձայնութեամբ : Եւ հինգ տարի ժամանակով : Մակեդոնայի կառավարիչը պիտի ընտրուէր հանգուցեալ Ալէքսանտր Պաթէնպէրի իշխանին Թրանք եղբայրը : Միւս նահանգները պիտի կառավարուէին Արեւելեան Բուլղարի ձեռով :

Սակայն այդ ծրագրի մասին Սուլթանը տեղեկութիւն կը ստանայ Սօֆիայի թուրք հրեւոյստունէն և խկոյն երկու թիկնապարս կը լրիէ Ալպանիա, այդ ծրագիրը սպաւախու համար, որ և ինչպէս կերելի կը յաջողի :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վարդապետ մը պատրիարքարանի դիմեր է որ զինքը կարգաւոր ընեն, որովհետեւ ինք չի կրնար կուսակրօն մնալ :

«Սուրհանդակ» վարդապետին այդ անկեղծութիւնը կը գրատէ սակայն կաւելցնէ նաեւ որ ամէն մարդ նախ քան կուսակրօն ըլլալը պարտաւոր է լաւ խորհիլ և յետոյ այդ քայլը ընել, որպէսզի վերջը ասանկ գէպքեր չը պատահին :

Ի դէպ է յիշել որ կուսակրօնութեան գէմ ուսումնասիրութիւն մը կայ Մանչէսթըր հրատարակուող «Մանչէսթըր Էքզամինէր» թերթին մէջ :

Կուսակրօն անյաջողութիւններուն պատճառ մը, յանցաւոր մը, ու այդ վեհանձն ու ազնիւ զգացումներու հոսանքի վարկեանին, իրենց աչքին պուլկարները նշարուեցան : Եւ անհարաք մը խաբէութեան, եզրայրատուութեան և վարկուտութեան և այլն մեղադրանքներ սկսան ինչ անոնց : Ամբաստանութիւններու ժահահոտ նախախնայներու միացաւ արձակ հալածանքներ, անվստահութիւնը : Պուլկարները իսկոյն հասկցան որ անհաւասար յաշնակիցներու պէս չեն վարուիր իրենց հետ : այլ կը նային զիրենք իրիւրեւ վարձկան զինուորներ, բազմախնդիրներէ բաղկացած միայն կոռուպտի սիրոյն համար եկած : մամուլն ալ իր կողմէն այդ կրակը կարծարէր : Սընուեղի պաշարի ռազմամթերքի զԸՐկանքն ալ զգալի եղաւ և պուլկարները «հին սերպիացիներ» անուանուել փորձ մը եղաւ : Նիկոթիին մօտ պահանջեցին որ Սերպիական դրօշը կըրեն փոխանակ պուլկարականի : Այսպէս օր աւուր իրենց կայտնութիւնը կը վատթարանար և իրենց նպատակն ալ դժուարին կըլլար իրագործել : Բայց բոլոր զրկանքները ու բոլոր ֆիզիքական տառապանքները կոչնչունային այդ պուլկարները վախկոտ են՝ ազգակներու առաջը :

Իրենց բարոյական ու հոգեկան տան-

տարակուող Հայ-եկեղեցի կրօնական ամաթերթին մէջ, ուր Աստուածարան հայր սուրբը կապացուցանէ թէ հայոց եկեղեցին հակառակ չէ կուսակրօնութեան :

— Մուշէն Արեւելքի կը գրեն թէ՛ այս տարի հունձքը առատ է և արդէն քանի շաբաթէ ի վեր քաղը սկսած է : Յորենի կողմը գրեթէ չորսի իջած է, և դեռ ամաննալու յոյս կայ :

— Գաւառական սրբանոցներու սեպտեմբերի և հոկտեմբերի ամսականները կը զրկուին պատրիարքարանէն :

— Համբարձու՛մ Առաքելեան Մշակի խմբագրութեան կողմէն ներկայ պիտի ըլլայ Վենետիկի Մխիթարեան յորեկեանի հանդէսին :

— Անահիտէն կիմանանք որ ատամնարոյժ Տօքթ. Յ. Ս. Փափազեան Բարիլի երկու բրօֆէսօրներու առաջարկութեամբ ֆրանսական ատամնարոյժներու ընկերութեան անդամ ընտրուեր է :

Կը շնորհասորենք :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քրքախնամիս նախկին հաւաքիչ Ռուբէն Բարապաճաքեան իր անձնական գործի պատճառաւ հաւաքչութեան պաշտօնէն հրաժարուած ըլլալով, ընկերութեան նոր հաւաքիչ վարձուած է Պ. Ռուբէն Գաղանձեան :

Ի դիմաց գործ, ժողովոյ (Կնիք)

Ձանքներու իրը տպացոյց կը բերենք այն ստուտան հարեւրապետ Բայջօի վաշախն առջեւ արտասանած ճառին վերջին մասը ձևաւոր այն օրն է, ըստու ան որ պիտի տպացուցենք թէ մենք գիտենք քրիստոնէութեան բռնաւորին հետ մեր հաշիւը մաքրել, և անխիղճ Իսթօֆ (՝) լրագիրն ալ լընեցնել տալ : ... Այսօր կուրին մէջ մեր քաջի արեան հեղհեղովը թէ մեր երեսը և թէ մեր անուը լուանք ու մեր ոտնակոխ եղած պատիւը փերկենք (՝) :

Բայց սեպտեմբերի 46 Եկած էր :

Վաշտը հազիւ դիրքերը բռնած տեղադրուած էր, երբ յանկարծ օգրթնդաց թնթանութիւններու որոտներէն, որոնք ալ կողմէն կուգային :

Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ
(Շարունակելի)

(՝) Սերպ պաշտօնական թերթ Պելկրատի մէջ :

(՝) Աս տեղեկութիւնները քաղած եմ ինչպէս վերոյիշեալ քօղարկեալ քաղութիւն» գրքէն նուա մասնաւոր անհատներէ որոնք Սերպիոյ կամաւոր հրոսակախմաներուն ու միեւնոյն կուրից մասնակցած են :

Պուլկար կամաւորներու վաշախն միակ պոչտիլի անմիջական հրամանատարը, հարիւրապետ քաջ Բայջօ Նիքօրաէֆէ էր, (՝) որ զօրավար Չէրնաէվին նշանակուած էր, աս ալ պուլկար եւ ուսու բանակին ծառայած ու նշանաւոր եղած է իր յանդուքն լողալով անցնելովը Դանուբէն 1854 թուին :

Չորս վաշտը որ հիմա մարդուած ու կարգապահ զինուորներ կը բաղկանար, առաջ 96 հոգիէ կազմուած հրոսախումբ մըն էր, դեռ յուլիսին Պուրէի մէջ հարիւրապետ Բայջօ Նիքօրաէֆէն կազմուած եւ ֆլուսաօժ քերուած, ֆլուսօյի Սերպիլիսանութիւններէ զինաթափ լլաւով, եւ ֆօրթիլիցայի մօտերը թուրքերուն հետ քանի մը արիւնալի ընդհարումներ ունեցած էր, օդոստոս ճին թուրք ու Չէրքէզ ապստամբները հաւածեց :

Կրտսի պարտապնդումն մօտ, չորս թնթանութիւն վիճուած թշնամիին կարեւոր բանակը ջարդեց և զայն հարկադրեց բերելն մէջ արգիւտելու : Անգամ մը կրակի մէջ մտած, աւելի

(՝) Այս այն Բայջօ Նիքօրաէֆէ է որ 1885 սեպտ. ճին Ֆիլիպիլի մէջ Պուլկարիոյ ու Բուլղարի միացումին զոհ գնաց :

Ա. Զ. Գ.

Թագական խորհուրդս կը փութայ ծանուցանել թէ Ազգ. վարժարանաց և մանկտպարտեզի վերաբարցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտ. 3ին երկուշաբթի օր:

Աստի կը հրաւիրուին ծնողք և պաշտպանք ներկայանալ, ամէն օր տաւառտները ժամը 8—12 իսկ կէսօրէն յետոյ ժամը 2—5 ի թաղական խորհրդարան իրենց զաւակաց մտից արտօնագիրը ստանալու համար:

Ի դիմաց թաղ. խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս. Գափրիէլեան Յ. Թովմասեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Ր Ք Ի Ա

Սուլթանի գահակալութեան տարեգարձին օրը, Պօլսոյ ֆրանսական դեսպանատունը չէ լուսավառուէր:

Խարբերդէն 500 զինուոր ճամբայ ելեր է դէպի Մուշ. խռովութիւններու տեղը:

450 նորակոչ զինուորներ Տարտանէլէն դէպի Եէմէն ղրկուեր են:

Չը նայած որ Թուրքիոյ և Ֆրանսայի յարաբերութիւնները խզուած են, այն ու ամենայնիւ պալատին աջարողակեալ գահակալութեան տարեգարձին առթիւ հրաւիրագիր ղրկած է ֆրանսական դեսպանատունը:

Դեսպանատան խորհրդական Պարսթ անձնական նամակով մը պալատի արարողակեալին պատասխանած է որ օգոստ. 26էն սկսեալ ֆրանսական ներկայացուցչութիւնը Պօլսոյ մէջ գոյութիւն չունի, այդ պատճառով ֆրանսական թարգմանը պալատ չի պիտի երթայ:

Սուլթանը դիմած է Գերմանական դեսպանին Ֆրանսայի հետ տեղի ունեցած վէճը կարգադրելու համար, բայց Գերմանական դեսպանը յայտարարած է որ ինք առանց իր կառավարութեան հրահանքներու բան մը չի կրնար ընել: Ատկէ վերջ Սուլթանը հեռագրած է Պէրլինի թիւրք գեսպանին Գերմանիոյ աջակցութիւնը պահանջելու համար: Միայն Պօլսոյ մէջ համոզուած են որ Գերմանիա Սուլթանի խորհուրդ պիտի տայ որքան կարելի է շուտով կարգադրել Ֆրանսիոյ հետ ունեցած վէճը:

Ֆրանսական դեսպանի խորհրդական Պարսթ անցեալ օր երկար խորհրդակցութիւն մը ու-

նեցեր է ռուս դեսպանին հետ Ֆրանսա-Թուրքական ընդհարումին առթիւ:

Ռուս դեսպանը արտաքին գործոց նախարարի հետ տեսակցութիւն մը ունեցեր է Հին Սերպիոյ վիճակի մասին: Չինովիէ վչեշտած է որ լուրջ ջանքերով ձեռք առնուին քրիստոնեաներու հանգստութիւնը ապահովելու համար:

Սուլթանը կրկին Մուշի հայերէն հեռագիր մը ընդունած է սրով իրմէ կը խնդրուի պաշտպանել քրտերուն յարձակման դէմ: Նոյն հեռագրին մէջ կը յայտարարուի որ առաջին հեռագրէն մինչեւ վերջին հեռագրին օրը քիւրտերը կրկին 30 հայ ուսանած են:

Սարը Թաշի (պուլկաթ թուրք սահմանադուր) վրայ պատահած թուրք պուլկարին ընդհատման խնդիրը դեռ ևս չէ կարգադրուած:

Հայոց Պատրիարքը Սուլթանի գահակալութեան օրը քանի մը քաղաքական դատապարտեալներու համար ներումն խնդրած է. սակայն Սուլթանը փոխանակ Պատրիարքին խնդիրը կատարելու քանի մը հայ հոգեւարականներու շքադրամներ պարգեւած է:

Նոր իրտաէնով մը Հին Սերպիան փախած Սերպերուն արտօնուեր է իրենց հայրենիքը վերադառնալ:

Չգուշութեան համար բազմաթիւ հայեր ձերբակալուած են Պօլսոյ մէջ:

Գահակալութեան առթիւ պետական պոչտօնեաներու ամսականներէն 40—60 0/0ը վճարուած է:

Սուլթանն ալ Բարիզէն իր դեսպանը ետ կանչել է:

Ֆրանսայի և Թուրքիոյ վէճը բոլորովին մեղմացած է. Բ. Գուռը կը պնդէ որ երկու ֆրանսահպատակներու պահանջքները չափազանց են և պիտի պակսեցնեն:

Ի Տ Ա Լ Ի Ա

Ժողովրդական ընկերութեանց երեսունի չափ ներկայացուցիչներ գումարում մը ընելով փափաք յայտներ են որ ընկերակցութեան նոր օրէնքին պատճառաւ Ֆրանսայէն հեռացող կրօնական միաբանութիւններուն արգիլուի Խալիոյ մէջ հաստատուիլ, եթէ ուզեն հոն բնակել: Այդ համագումարին մէջ որոշուեր է առժամայ մասնախումբ մը կազմել, որուն պաշտօնը պիտի ըլլայ ծրագիր մը պատրաստել կառավարութիւնը հրաւիրելու համար, որպէս զի խիստ միջոցներ ձեռք առնէ թէ՛ Խալիոյ մէջ հաստատուած և թէ՛ ար-

տասահմանէն գացող միաբանութեանց դէմ:

Գանի մը օր էր որ Չինական կայսեր պատուիրակը Չուիցերիոյ մէջ մնացած էր, որովհետեւ Վիլհէլմ ստորնացուցիչ պայմաններ առաջարկեր է Չուին իշխանէն ներողութիւն խնդրելու պատուիրակութիւնը կատարելու համար:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Վերջապէս Վիլհէլմ Չուին իշխանի յայտարարած է որ իր այցելութեան միջոցին միմիայն թարգմանը պիտի գտնուի: Չուին գոհ այդ կարգադրութենէն իսկոյն ճամբայ ելեր է դէպի Բոցտամ և Չինու ցուակցութիւնը Վիլհէլմի յայտնելէ վերջ, իսկոյն Չինաստան պիտի վերադառնայ:

Գերմանական կայսրը Թագուի եւրոպական զօրքերուն կողմէն պաշարումի պատմութիւնը գրած է և պիտի հրատարակէ, գրքին նկարները կայսրը դժած է: Գիրքը ծախու պիտի հանուի:

Ս Ե Ր Պ Ի Ա

Սերպիոյ թագուհին երեւակայացեալ յղիութենէ վերջը գահաժառանգ կը փնտռուի, ոմանք կը անհետ թէ Գարատաղի իշխանին երկրորդ որդին պիտի ընտրուի, ոմանք ալ Տրագա թագուհին եղբօր մտսին կը խօսին:

Ֆ Ի Ա Ն Ս Ա

Բարիզի Բարէլ թերթը կը սէթէ Չարը մտադիր է Գօբէնհակի մէջ միապետներու վեհաժողով մը գումարել:

Նախարարական խորհուրդը վերջնական կերպով սահմաներ է Չարի ուղեւորութեան ծրագիրը. այդ ծրագրին մէջ Բարիզ այցելելու մասին բան մը նշանակուած չէ:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Վարսովիայի մէջ ձերբակալուած են 200 հոգի որոնք մասնակցած են ընկերավարականներու ժողովի մը:

Պէթէրսպուրկի մէջ ալ 400 հոգի ձերբակալուած են:

Թ Ի Ա Ն Ս Վ Ա Լ

Թրանսվալի կառավարիչը Միլնէր Բերթաունի մէջ Ունդէնտէրներու պատգամաւորութիւնը ընդունած առեն յայտարարած է թէ կառավարութիւնը հոգ կը տանի որ Թրանսվալի փախտականները կարելի եղածին չափ շուտ վերադառնան հայրենիք:

Ետհանէսպուրի կը նկատուի ներուն յանձնող պօէր կօման-

տան կրաուզէ. որ վերջին ամիսներս Լօնտօն կը բնակէր, լրտեսութեան մէջ կասկածուելով, ձերբակալուած է:

Լօրտ Գիլնէր Բրէթօրիայէն կը հեռագրէ թէ՛ օգ. 26էն ի վեր 19 պօէրներէսպանուեր, 3 վիրաւորուեր, 212 գերի ինկեր և 127 անձնատուր եղեր են. նաև Անգլիացիները ձեռք անցած են 194 հրացան, 25,760 փամփուշտ, 144 սալ, 1700 ձի, 7500 առջառ ու մեծաքանակ պաշար:

Մ Ա Լ Ի Ա

Մալթայի մէջ լեզուական խընդիրը սուր հանգամանք մը կանուէ:

Մալթացի մը անգլիական լեզուով գրուած հրշարագրեր զրկած ըլլալով իր բարեկամներուն, ամէն կողմէ մերժուի նամակներ ստացեր է իտալերէն լեզուով գրուած:

Ա. Զ. Գ.

Ռուսներոյ Գէօրգիէնէ քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցոյ համար կը խնդրուի վկայեալ երաժիշտ դաստուար մը, որ ունենայ ախորժալուր ձայն, պարկեշտ եւ բարի վարք. 25—30 տարեքով, եւ միանգամայն կարող Ազգ. վարժարանի մէջ երկրորդական դասեր աւանդելու:

Գոհացուցիչ ամսական. մանրամասն տեղեկութեանց համար փափաքող կանխաւ կարող են դիմել հետեւեալ հասցէին:

M. Ilie M. Grigorian Tipographe Roumanie Constanta

ԵՆԻՐՊՈՍԻ ԶԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻԻՆ

Եւրոպայի Հայ. Ռուս Արուսեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով Իւնիօն Տէրօղիսեան Արմ. Լ'Եօրոք ռիւ սը Լ'Եօլ սը Շիմի 2

Սուրբ Ժրնէվ Կարգադիր Յանձնաժողով

«Ժ Ա Մ Ա Ն Ա Կ»

Երկամսեայ գրական, գիտական եւ զեղարուեստական հանդէս՝ Խմբագրութեամբ Ս. Գ. Հախումեանի հրատարակուած է Ա. Թիւր ճոխագոյն պարունակութեամբ եւ 88 էջերով, տարեկան բացնեցին է 25 ֆր. դիմել խմբագրին, 64, ռիւբլոս-Պէրնար

Отговорникъ: Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна